

Որ դեպքում և ինչ քանակով կստանան փոխհատուցում սոցիալապես անապահով ընտանիքները և հաշմանդամություն ունեցող անձիք

1. Մեր ընտանիքը ունի 65000-ից մինչև 100001 վարկանիշային միավոր, հասնում է թե՞ ոչ օգնություն:

Եթե ձեր ընտանիքը „Սոցիալապես անապահով ընտանիքների տվյալների միասնական բազայում“ ունի գրանցում և վարկանիշային միավորները կազմում են 65000-ից մինչև 100001-ի, ապա 2020 թվականի մայիսի 1-ից 6 ամսվա ընթացքում ***ընտանիքի յուրաքանչյուր անդամ կստանա 35 լարի***: Բացառությամբ մեկ կամ երկու անդամ ունեցող ընտանիքների: Օրինակ, եթե մեկ հոգուց է բաղկացած ընտանիքը փոխհատուցում կստանա 70 լարի, իսկ երկու հոգուց՝ 90 լարի:

2. Սոցիալապես անապահով ընտանիքների տվյալների բազայում գրանցված ենք ունենք մինչև 100001 վարկանիշային միավոր և 3 անչափահաս 16 տարին չըրացած երեխաներ, հասնում է թե՞ ոչ որևէ օգնություն:

Սոցիալապես անապահով ընտանիքների տվյալների բազայում գրանցված մինչև 100001 վարկանիշային միավոր ունեցող ընտանիքները, որտեղ կա 3 և ավելի 0-ից մինչև 16 տարին չըրացած երեխաներ, տալիս են փոխհատուցում ամսեկան ***100 լարիի չափով 2020 թվականի մայիսի 1-ից 6 ամսվա ընթացքում***:

3. Սահամանափակ կարողություն ունեցող անձ եմ, ունե՞մ թե ոչ փոխհատուցում ստանալու իրավունք:

Եթե դուք առաջին կարգի հաշմանդամ եք կամ սահամանափակ կարողության տեր երեխա, ապա ***2020 թվականի մայիսից 6 ամսվա ընթացքում կստանաք 100 լարի օգնություն***:

4. Ու՞մ և երբ պետք է դիմեմ սոցիալապես անապահով ընտանիքների և հաշմանդամության համար նախատեսված փոխհատուցում նշանակելու համար:

Եթե դուք արդեն սոցիալապես անապահով ընտանիքների տվյալների միասնական բազայում ունեք գրանցում կամ/և ունեք համապատասխան հաշմանդամության կարգավիճակ, ապա ոչ մի տեղ էլ պետք չի դիմել: Սոցիալական սպասարկման գործակալությունը անձանք կհոգա փոխհատուցում ստացող ընտանիքների/անձանց նույնականացումը և փոխհատուցումը կփոխանցի սոցիալական փաթեթի/պետական փոխհատուցման կամ նպաստի հետ միասին:

5. Եթե 2020 թվականի մայիսի 1-ից հետո (մայիսի 15-ին) իմ ընտանիքին հաստատվեց 66000 միավոր, նշանակվում է թե՛ ոչ ամենամսյա 100 լարի փոխհատուցումը:

Այս դեպքում փոխհատուցումը նշանակվում է վարկանիշային միավորները շնորհելուց՝ հաջորդ ամսից (այս դեպքում հունիսից), այս ծրագրի շրջանակում նախատեսված փոխհատուցման ժամանակահատվածի մնացած ամիսների ընթացքում (ներառյալ հոկտեմբեր ամիսը):

6. 2020 թվականի մայիսի 1-ից հետո (1 հունիսի) հաստատվեց առաջին կարգի հաշմանդամության անձի կարգավիճակ, նշանակվում է թե՛ ոչ ամենամսյա 100 լարի փոխհատուցումը:

Մայիսի 1-ից հետո առաջին կարգի հաշմանդամության կամ սահմանափակ կարողության տեր երեխայի կարգավիճակ հաստատվելուց հետո, փոխհատուցում տրվում անձի/օրինական ներկայացուցչի կողմից դիմումի և բժշկական-սոցիալական փորձակիտական ակտի քաղվածքը Սոցիալական գործակալություն գրավոր կամ էլեկտրոնային տեսքով ներկայացնելուց հետո, *հաջորդ ամսվանից* այս ծրագրի շրջանակում փոխհատուցման համար նախատեսված ամիսների ընթացքում:

7. Մեր ընտանիքը կազմված է 5 անդամից, որտեղ 3 հոգին 16 տարին չլրացած երեխա են, ընտանիքի վարկանիշային միավորը կազմում է 67000 և ընտանիքի չափահաս անդամներից մեկը ունի առաջին կարգի հաշմանդամություն: Ունե՞մ թե ոչ իրավունք բոլոր երեք փոխհատուցումները միաժամանակ ստանալու:

Համապատասխան նախադրյալները ունենալու դեպքում, երեք փոխհատուցումը (սոցիալական անապահով ընտանիքների և հաշմանդամ անձանց համար) միաժամանակ ստանալու արգելք չկա, այսպիսի դեպքերում իրավունք ունեք 2020 թվականի մայիսից մեկից ամեն ամիս ստանալ 100 լարի փոխհատուցում 6 ամսվա ընթացքում (3 անչափահաս երեխաների և մինչև 100000 միավոր ունենալու հիման վրա) + փոխհատուցում յուրաքանչյուր ընտանիքի անդամին ամեն մեկին 35 լարի (ընդամենը 175 լարի) մայիսի մեկից 6 ամսվա ընթացքում + առաջին կարգի հաշմանդամություն ունեցող անձը իրավունք ունի միաժամանակ ստանալու ամեն ամիս 100 լարի փոխհատուցում 2020 թվականի մայիսի մեկից 6 ամսվա ընթացքում:

8. Իմ ընտանիքը գրանցված է սոցիալապես անապահով ընտանիքների տվյալների միասնական բազայում և ստանում եմ նպաստ: Փոխհատուցում նշանակվելու դեպքում ստացված եկամուտը կարող է ազդել ընտանիքի վարկանիշային միավորների վրա:

Ոչ, քանի որ փոխհատուցում նշանակվելու դեպքում ստացած գումարը չի ազդում սոցիալապես անապահով ընտանիքների վարկանիշային միավորների վրա:

9. Մայիսի 1-ից նշանակվեց փոխհատուցում, քանի որ մեր ընտանիքի վարկանիշային միավորը 100 000 ցածր էր և ունեի 3 անչափահաս երեխա (16 տարեկանից փոքր): Մի երեխան հուլիս ամսին կլինի 17 տարեկան, այդ պատճառով կդադարեցվի թե ոչ նշանակված 100 լարի փոխհատուցումը:

Ոչ, քանի որ բազմազավակ սոցիալապես անապահով ընտանիքների համար նշանակված փոխհատուցումը պահպանվում է ամբողջ ժամկետում և փոխհատուցում ստանալու ընթացքում ընտանիքում 0-16 տարեկան երեխաների քանակի փոփոխությունը չի ազդում փոխհատուցման դադարեցմանը: